ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԴՐՈՇՈՎ

КОММУНИЗМИ ДРОШОВ

ՕՐԳԱՆ — ՀԿԿ ԹԱԼԻՆԻ ՇՐՋԿՈՄԻ և ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՇՐՋԽՈՐՀՐԴԻ
ОРГАН — ТАЛИНСКОГО РАЙКОМА КПА И РАЙСОВЕТА ДЕПУТАТОВ ТРУДЯЩИХСЯ

26-ՐԴ ՏԱՐԻ | ՀԻՆԳՇԱԲԹԻ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1957 Թ. | № 79 (2057)

## ՊԱՐՏԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՐՄԱՏԱՊԵՍ ԲԱՐԵԼԱՎԵԼ ՊԱՐՏԻԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԳՈՐԾԸ, ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ԴԱՐՁՆԵԼ ԷԼ ԱՎԵԼԻ ԳՈՐԾՈՒՆ, ԷԼ ԱՎԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ ՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ:

## ՊԱՐՏԼՈՒՍՑԱՆՑԻ ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱՐՁՐ ԳԱՂԱՓԱՐԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Շրջանի սկզբնական պարտիական կազմակերպությունները ավարտեցին պարտիական լուսավորության ցանցի 1957-1958 ուսումնական տարվա կոմպլեկտավորման աշխատանքները: Նոր տարում քաղաքական ուսուցման տարբեր օղակներում կսովորեն 1.136 կոմունիստ, 165 կոմերիտական և 168 անպարտիականներ: Պարտիական կազմակերպություններին կից ստեղծված են 31 քաղխմբակ և 16 թեորիական սեմինար:

Կոմպլեկտավորումը ցույց է տալիս, որ շատ պարտիական կազմակերպություններ հատուկ ուշադրություն են դարձնում կոմունիստների և անպարտիական կադրերի տնտեսագիտական ուսուցման վրա և այդ նպատակով ստեղծել են կոնկրետ էկոնոմիկան ուսումնասիրող խմբակներ ու սեմինարներ:

Այս ուղղությամբ խրախուսելի նախաձեռնություն է հանդես բերել ՄՏ կայանի պարտիական կազմակերպությունը, որն ստեղծել է գյուղատնտեսության էկոնոմիկան ուսումնասիրող երկու թեորիական սեմինար, ուր ընդգրկվել են հիմնականում բրիգադիրներ, մեխանիզատորներ՝ թվով 47 հոգի:

Գյուղատնտեսության էկոնոմիկան ուսումնասիրող խմբակներ և սեմինարներ են ստեղծվել նաև Մաստարայի, Դավթաշենի, Ներքին Բազմաբերդի, Աշնակի, Եղնիկի և ուրիշ պարտկազմակերպություններում:

Շրջանում շուրջ 300 կոմունիստներ և անպարտիականներ մարքսիզմ-լենինիզմի թեորիան ու պատմությունը ուսումնասիրելու են ինքնուրույն կարգով:

Պարտիայի շրջանային կոմիտեի բյուրոն արդեն հաստատել է քաղլուսցանցի 1957-1958 ուստարվա կոմպլեկտավորման արդյունքները: Կազմակերպությունները և շրջանային կոմիտեի բյուրոն պրոպագանդիստական աշխատանքի համար առաջ են քաշել նոր ավելի կարող ու զրագետ ընկերների: Բավական է նշել, որ պրոպագանդիստների, սեմինարների ղեկավարների և կոնսուլտանտների 75 տոկոսից ավելին ունեն բարձրագույն ու թերի բարձրագույն կրթություն, աշխատանքի հարուստ փորձ:

Պարտիական լուսավորության ցանցում գլխավորը ուսուցման բարձր գաղափարայնությունն է, նրա նպատակասլացությունը: Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կոմունիստների մարքսիստական-լենինյան աշխարհայացքի դաստիարակության հարցերին, այդ նպատակով ավելացել են ՍՄԿԿ պատմությունն ու քաղաքատնտեսությունն ինքնուրույն և խմբակային ուսումնասիրողների թիվը:

Հարկավոր է զգալիորեն ընդլայնել ՍՄԿԿ պատմությունը, դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի, քաղաքատնտեսության հիմունքները, մարքս-լենինյան տեսության և միջազգային բանվորական ու կոմունիստական պրոբլեմներն ուսումնասիրող թեմատիկ խմբակների ու սեմինարների ցանցը:

Կոմունիստների և անպարտիական ակտիվի քաղաքական ուսուցման հաջողությունը մեծ չափով կախված է նրանից, թե ինչպես կսկսվի նոր ուսումնական տարին: Պարտիական կազմակերպությունները պարտավոր են առաջիկա մի քանի օրում լրիվ ավարտել նոր ուստարվա նախապատրաստական բոլոր աշխատանքները, որոշելու պարապմունքների վայրը, օրը, ժամը և ստեղծելու մյուս բոլոր պայմանները:

Մեծ անելիքներ ունի շրջկոմի քաղլուսի կաբինետը, որը պետք է սիստեմատիկ օգնություն կազմակերպի պրոպագանդիստներին, կոնսուլտանտներին և սեմինարների ղեկավարներին: Անհրաժեշտ է բարելավել պրոպագանդիստների մշտական սեմինարի աշխատանքները:

Պարտկազմակերպությունները պարտավոր են ամեն ինչ անել քաղլուսցանցի նոր ուստարին կազմակերպված սկսելու, քաղաքական ուսուցման բարձր գաղափարայնությունը ապահովելու համար:

## ՄԵՐ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

### 750 ԲՐՈՇՅՈՒՐ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի էքսկուրսանտները իրենց հետաքրքրող հարցերի շուրջը մեծ քանակությամբ ձրի գրականություն են ստանում տաղավարներում: Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի պրոպագանդայի վարչության հրատարակած բրոշյուրներում և թերթիկներում նկարագրվում են գյուղատնտեսական արտադրության առաջավորների փորձը, ինչպես նաև գիտական հիմնարկների կողմից հանձնարարվող՝ աշխատանքի նոր, ավելի կատարելագործված եղանակները: Նյութերի մեծ մասը գրել են իրենք նորարարները:

Ցուցահանդեսը առաջավոր փորձի մասին մասսայական տիրաժով հրատարակել է 250 բրոշյուր և թերթիկ, իսկ ռեսպուբլիկական, երկրամասային ու մարզային հրատարակչությունները՝ 500: Հրատարակությունների ընդհանուր տիրաժը 12 միլիոն օրինակից ավելի է:

(ՏԱՍՍ)

### ԻՐՏԻՇ ԳԵՏՈՎ ՓՈԽԱԴՐՎԵՑ 18 ՄԻԼԻՈՆ ՓՈՒԹ ՀԱՑԱՀԱՏԻԿ

Իրտիշի գետային նավագնացության նավատորմը երկրի հեռավոր շրջաններից արդեն Պավլոդար, Սեմիպալատինսկ և Ուս-Կամենոգորսկ է փոխադրել ավելի քան 18 միլիոն փութ հացահատիկ: Դա մեծապես գերազանցում է անցյալ տարվա ամբողջ նավագնացության ընթացքում փոխադրվածից:

Իրտիշի նավագնացության աշխատողները պարտավորվել են մինչև նավագնացության փակումը փոխադրել ևս առնվազն 7 միլիոն փութ հացահատիկ: Դա հիմնականում կլինի Ալթայի երկրամասի դաշտերում աճեցրած հացահատիկը:

(ՏԱՍՍ)

### ՍՏԱՑԱՆ 3,2 ՄԻԼԻՈՆ ՏՈՆՆԱՅՈՎ ԱՎԵԼԻ ԿԱԹ

Երկրի կոլտնտեսությունները ու սովխոզները ութ ամսում ստացան 3,2 միլիոն տոննայով, կամ 21 տոկոսով ավելի կաթ, քան անցյալ տարվա նույն ժամանակաշրջանում: Կոլտնտեսությունների և սովխոզների ֆերմաներում այդ ժամանակաշրջանում յուրաքանչյուր կովից միջին հաշվով ստացվել 1.496 կիլոգրամ կաթ:

### ԱԼԹԱՅՑԻՆԵՐԸ ՀԱՆՁՆԵՑԻՆ 196 ՄԻԼԻՈՆ ՓՈՒԹ ՀԱՑԱՀԱՏԻԿ

Ալթայի երկրամասի հողագործները արտադրական չտեսնված վերելքով ներքափոխության կանգնեցին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի պատվին: Հավաքվել է ավելի քան 5 միլիոն հեկտարի բերքը: Խոպանի կոլտնտեսությունները ու սովխոզները պետությանը հանձնել են 196 միլիոն փութ հացահատիկ:

(ՏԱՍՍ)

### ՈՍԿԵԹԱՍԻ ՋՐՄՈՒՂՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ՆԿԱՐՈՒՄ.—Ագիտատոր Մ. Կարապետյանը բանվորներին ծանոթացնում է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնի և ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի թեզիսներին: Գլխամասի բանվորները զրույցի ժամանակ:

